ՀՏԴ Պատմություն

ՇԱՀ ԱԲԲԱՍԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆ ԵՎ ԻՐԱՆԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ XIIV ԴԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ

Ա. Հակոբյան

15-րդ դարի վերջում Վրաստանի միացյալ թագավորությունը մասնատվում է: Երկրի տարածքը բաժանվում է յոթ իշխանությունների միջև, որոնցից առանցքային նշանակություն են ստանում Քարթլիի թագավորությունը, որը ներառում էր Վրաստանի կենտրոնական և հյուսիսային շրջանները և Կախեթի թագավորությունը, որը տարածվում էր Քուռ գետից հյուսի[1]: Բացի վերոնշյալ թագավորություններից, առանձին իշխանություններ են ձևավորվում Իմերեթիայում, հյուսիս արևմուտքում՝ Մենգրելիան և Աբխազիան, հարավում՝ Սամցխեն և Գուրիան: Թեև Վրաստանն ամբողջությամբ չի գտնվել Սեֆյան Իրանի ազդեցության տակ, այնուամենայնիվ վրաց թագավորները հարկատու էին Իրանի շահերին:

Սեֆյան Իրանն իր կազմավորման առաջին տարիներից ի վեր պատերազմական հարաբերությունների մեջ էր գտնվում իր արևմտյան հարևան Օսմանյան Թուրքիայի հետ:Ողջ 16-րդ դարն այս երկու պետությունների հարաբերությունները կրում էին խիստ լարված, պատերազմական բնույթ: Ռազմական գործողություններն ընթանում էին փոփոխական հաջողությամբ երկու կողմերի համար էլ, սակայն ընդհանուր առմամբ առավելությունը պատկանում էր Օսմանյան Թուրքիային: Թուրքական բանակը նախորդ դարերի ընթացքում հիմնականում հաղթանակներ էր տարել, ընդլայնելով Օսմանյան տերության սահմաններն արևմուտքում: Թուրքական բանակի հաղթանակների կարևոր գրավականներից մեկն էլ, անշուշտ, սպառազինության առավել բարձր մակարդակն էր, եվրոպական մարտական փորձի կիրառումը և այլն: Սկսած շահ Իսմայիլից՝ իրանական բոլոր տիրակալները տարածքներ են զիջել Օսմանյան կայսրությանը:1587թ-ին Իրանում գահ է բարձրանում Մոհամմադ Խուդաբենդե շահի որդին՝ Աբբաս Միրզան, ստանալով շահ Աբբաս առաջին գահակալական անունը: Երիտասարդ տիրակալի գահակալության առաջին տարիները դժվարին ժամանակաշրջան էր Իրանի համար: Շահ Աբբասը ստիպված է լինում ընդունել 1590թ-ին

[1]W. Floor, Safavid Government Institutions, Costa Mesa, 2001, p. 85.

Ստամբուլում կնքված հաշտության պայմանները, որոնց համաձայն՝ Թուրքիային է զիջում Իրանական տերության հարավկովկասյան գրեթե ողջ տիրույթները[1]:

Շահ Աբբասը գիտակցում էր, որ անհնար է հաղթել Թուրքիային, քանի դեռ Իրանում ամրապնդված չէ կենտրոնական իշխանությունը, ուստի նախնառաջ ձեռնամուխ է լինում ներքին քաղաքական խնդիրների լուծմանը: Այնուհետև վերազինում է իրանական բանակը, անգլիացիներ Ռոբերտ և Անտոնի Շերլի եղբայրների աջակցությամբ և գործուն մասնակցությամբ: Անգլիացիների օգնությամբ իրանական բանակը համալրվում է շուրջ 200 թնդանոթներով, ինչի շնորհիվ բարձրանում է զորքի մարտունակությունը և իրանական բանակը հնարավորություն է ստանում դիմագրավելու թուրքական զորքերին: Շահը ստեղծում է նաև հրացանակիրների 12- հազարանոց մի զորամաս, որը կոչվում էր<<թուֆենգչիներ>>[2]: Այս ամենին զուգահեռ Շահը թուլացնում է բանակի հիմնական կորիզը հանդիսացող ցեղախմբերի ռազմական ուժը, դրանք կենտրոնացնելով երկրի սահմանամերձ շրջաններում: Ղզլբաշական ցեղախմբերից կախվածությունը թուլացնելու նպատակով շահը ստեղծում է նոր ռազմական միավորում, որն ստանում է <<շահսևաններ>> անվանումը: Շահսևաններըշուտով վերածվում են մի արտոնյալ խմբի, որոնք օգտվելով շահի հովանավորությունից՝ մեծ ազդեցություն են ձեռք բերում Իրանում:Իրանական բանակի թիվը հասնում է շուրջ150000-ի, իսկ սպասարկող անձնակազմի հետ միասին, ըստ որոշ տեղեկությունների, 200-ից 300 հազարի[3]: Շահը ամենևին մտադիր չէր համակերպվել Ստամբուլի պայմանագրի հետ և, որպես հիանալի ռազմագետ,սպասում էր հարմար միջազգային իրադրության, երբ Թուրքիան զբաղված կլիներ ներքին խնդիրներով և եվրոպական տերությունների հետ պատերազմելով:

Պատերազմական գործողությունները վերսկսվում են 1603թ-ի սեպտեմբերին, երբ իրանական բանակը, խախտելով 1590թ-ի հաշտությունը, անցնում է հարձակման: Մինչ հարձակումը շահ Աբբասը վերլուծել էր իրավիճակը և սկսել էր պատերազմը այն ժամանակ, երբ

[1] В. В. Баптольд, Сочинения, том 2, ч. 1, Москва, 1963, стр. 754.

[2] Հ. Խ. Նաջարյան, Թուրք-իրանականհարաբերությունները 16-րդդարումու 17-րդդարիառաջինկեսինևՀայաստանը, Երևան, 1961, էջ 189:

[3] Վ. Բայբուրդյան, Իրանիպատմություն, Երևան, 2006, էջ 316:

Թուրքիայում բռնկվել էր ջալալիների ապստամբությունը[1]: Խորհրդային պատմագրության մեջ հնչել է այն կարծիքը, որ նախքան ռազմական գործողությունների վերսկսումը շահ Աբբասը հաշվի էր առել Հարավային Կովկասի բնակչության՝ հայերի, վրացիների և շիա մուսուլմանների համակրանքը և հույս ուներ ստանալ վերջիններիս աջակցությունը[2]: Իրականում հայերի կամ վրացիների վերաբերմունքը Իրանի հանդեպ համակրանք կոչելը, կարծում ենք, չափազանցություն է, քանի որ անտրամաբանական է համակրել մի տերության, որը դարեր շարունակ ձգտել է դավանափոխ անել ժողովրդին նկեղեքել է նրան իր բռնի քաղաքականությամբ:Այստեղ խնդիրը պետք է դիտարկել այն տեսանկյունից, որ հայերի համար ընտրությունը Օսմանյան Թուրքիայի և Իրանի միջև ոչ թե լավի և վատի ընտրություն էր, այլ ընտրություն էր վատի ու վատագույնի միջև:Իր կամքից անկախ՝ հայ ժողովուրդը հայտնվում է ռազմական գործողությունների կիզակետում: Ինչպես հայտնի է, այս արշավանքի ընթացքումՇահ Աբբասը հարյուրհազարավոր հայերի բռնի տեղահանեց և ամբողջ Արևելյան Հայաստանում ահռելի ավերածություններ գործեց:Սակայն միայն Արևելյան Հայաստանի գրավումը բավարար չէր նրան, ուստի իրանական զորքը ձեռնամուխ է լինում Արևելյան Վրաստանի վերագրավմանը: Շահ Աբբասի համար Վրաստանի գրավումը կրկնակի կարևորություն ուներ. նախևառաջ անհրաժեշտ էր այնտեղից դուրս մղել Թուրքիային և դիմագրավել ռուսական ազդեցության մեծացմանը Վրաստանում:

17-րդ դարի սկզբին Վրաստանը գտնվում էր մասնատված վիճակում: Ինչպես արդարացիորեն նշում է մեծանուն պատմաբան Լեոն, վրացական թագավորությունը ներքին երկպառակությունների պատճառով դարձել էր չափազանց թույլ մի քաղաքական կազմակերպություն պարսիկների և թուրքերի համար[3]: Մշտապես գտնվելով գահակալական պայքարի մեջ՝ վրացական իշխաններն ամեն կերպ ձգտում էին ստանալ Իրանի աջակցությունը, այդ պատճառով էլվրացական իշխանական տներում ձևավորվել էր մի արատավոր երևույթ, որն էր մահմեդականացումը: Վրացական գահաժառանգները հաճախ տարվում էին Իրան և որպես պատանդ՝ ապրում էին իրանական

[1]Վ. Բայբուրդյան, Իրանիպատմություն, Երևան,2006, էջ 318:
[2]Հ. Խ. Նաջարյան, Թուրք-իրանականհարաբերությունները 16-րդդարումու 17-րդդարիառաջինկեսինևՀայաստանը, Երևան, 1961,էջ200:
[3]Լեո, Հայոցպատմություն, հ. 3-րդ, գիրք 1-ին, Երևան, 1969, էջ 259:

արքունիքում, ստանում էին պարսկական դաստիարակություն՝ իսլամական ավանդույթներին համապատասխան:

17-րդ դարի սկզբինԹիֆլիսում իշխում էր Գեորգին, ով վրաց թագավոր Սիմոնի որդին էր, իսկ Կախեթիայում իշխում էր Ալեքսանդր 2-րդը: Երբ շահ Աբբասը վերսկսում է պատերազմը Թուրքիայի հետ, այս երկու իշխաններն էլ դաշնակցում են վերջինիս հետ և իրենց զորքերով մասնակցում են 1604թ-ին Երևանի բերդի պաշարմանն ու թուրքական զորքերի դեմ մղվող մարտերին: Նրանք այդպիսով հույսեր էին փայփայում արտոնություններ ստանալ պարսից շահից և վերահաստատել իրենց իշխանությունը: Սակայն հետագայում պարզ է դառնում, որ Շահ Աբբասն ամենևին էլ մտադիր չէ իշխանություն շնորհել նրանց: Պարսից շահի առաջին զոհն է հանդիսանում Թիֆլիսի իշխան Գեորգին, ով դավադրաբար թունավորվում է: Նրա փոխարեն վրացական վերնախավը գահ է բարձացնում վերջինիս մանկահասակ որդուն՝ Լուարսաբին[1]:

Իսկ Կախեթիայի իշխանական տանն այլ ճակատագիր էր վիճակված: Կախեթիայի իշխան Ալեքսանդրը երեք որդի ուներ: Ալեքսանդրը զիջել էր իշխանությունն իր որդիներից Դավիթին, սակայն վերջինս դառնում է իր եղբոր՝ Գեորգիի զոհը, ով դավադրաբար սպանում է Դավիթին՝ ցանկանալով գրավել իշխանությունը: Սակայն, եղբոր սպանությունից հետո Գեորգիին չի հաջողվում ամրապնդել իր իշխանությունը, քանի որ նրա դեմ է դուրս գալիս հայրը և վերագրավում է իշխանությունը:

Շահ Աբբասն ուշադրությամբ հետևում էր վրացական արքունիքում տեղի ունեցող իրադարձություններին և երբ Ալեքսանդրը վերահաստատում է իր իշխանությունը, այդ ժամանակ որոշում է մի նոր դավադրություն կազմակերպել Ալեքսանդրի դեմ: Այս անգամ խորամանկ շահի ձեռքին հարմար գործիք է դառնում Ալեքսանդր իշխանի երրորդ որդին՝ Կոնստանդինը, ով գտնվում էր պարսից արքունիքում և հավատուրաց էր ու դավաճան: Շահը ցանկանում էր նրա միջոցով գրավել Վրաստանը նհպատակեցնել իրեն,ուստի առաջարկում է նրան իրանական զորքի գլուխն անցնել և շարժվել դեպի Վրաստան: Սակայն այդ զորաշարժը պետք է լիներ Շամախին գրավելու պատրվակով: Շուտով Կոնստանդինը հասավ Կախեթիա, սակայն նրան չհաջողվեց կազմակերպել իր ծրագրած դավադրությունը, քանի որ վրացական

[1]ԱռաքելԴավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988, էջ 88:

արքունիքում զգուշավորությամբ էի մոտենում նրան: Եվ երբ իր հոր կասկածները վերացնելու համար նա իրոք շարժվեց Շամախու ուղղությամբ, այդժամ վրացական զորքերը դիտավորյալ կերպով նահանջեցին, հույս ունենալով, որ օսմանցիները կջախջախեն Կոնստանդինի զորքերը: Ճակատամարտում հաղթեցին թուրքերը, իսկ պարսկական զորքերը գլխովին ջախջախվեցին: Երբ Կոնստանդինը փախուստի է դիմում և ապաստան է գտնում Շահ Աբբասի արքունիքում, պարսից տիրակալն այս անգամ էլ է նրան զորք տրամադրում: Երեսուն հազար զորքի գլուխն անցած Կոնստանդինը արշավում է Կախեթիայի վրա: Այս անգամ նրան հաջողվում է իրագործել իր ծրագիրը: Կոնստանդինի զոհն են դառնում հայրն ու եղբայրը: Փաստորեն, 1605թ-ին շահին հաջողվում է կազմակերպել Կախեթիայի իշխան Ալեքսանդր 2-րդի և նրա գահաժառանգի սպանությունը: Սակայն այս դավաճանը, ով հոր և եղբոր դիակի վրայով ցանկանում էր իր իշխանությունը հաստատել Կախեթիայում, նույնպես շուտով գտնում է իր վախճանը: Կոնստանդինի դեմ են համախմբվում վրացական արքունիքի հիմնական ուժերը, և Ալեքսանդրի որդի Դավիթի կնոջ գլխավորությամբ կարողանում են ջախջախել պարսկական զորքերը: Հետագայում Կախեթիայի գահին տիրում է Ալեքսանդրի թոռը՝ Թեյմուրազը[1]:

Վրացիների ապստամբությունն ամեն դեպքում հետ է պահում Շահ Աբբասին իր հետագա ծրագրերից, և նա որոշում է միաժամանակ հաստատել քրիստոնյա թագավորներին Քարթլիի և Կախեթիայի գահերին: Այնուամենայնիվ, իրանական արշավանքը ծանր հետևանքներ է ունենում Վրաստանի համար: Ընդհանուր առմամբ 1605-1606թթ.պարսկական զորքերի կողմից շուրջ 80000 ծուխ վրացիներ, հայեր և հրեաներ գաղթեցվում են Իրան[2]:

Շուտով Իրանին հաջողվում է վերջնական հաղթանակի հասնել Թուրքիայի նկատմամբ և 1612թ-ին Կոստանդնուպոլսում կնքվում է հաշտության պայմանագիրը, ըստ որի Արևելյան Վրաստանն անցնում է Իրանի գերիշխանության տակ: Բնականաբար այս պայմանագիրը չէր կարող լուծել այն խորքային հակասությունները, որոնք առկա էին

[1]ԱռաքելԴավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988, էջ 91:
[2]Լ. Մ. Մելիքսեթ-բեկ, ՎրացաղբյուրներըՀայաստանիևհայերիմասին, հ. Ա, Երևան, 1936,էջ 112:

Թուրքիայի և Իրանի միջև[1]: Շահը ցանկանում էր շուտափույթ կերպով գրավել Վրաստանը և ամրապնդել Իրանի գերիշխանությունն այստեղ, քանի որ նրան սկսում է մտահոգել Ռուսաստանի ազդեցության մեծացումըտարածաշրջանում՝ հատկապես Վրաստանում[2]:

1614թ-ին շահը մի նոր արշավանք է ձեռնարկում Վրաստան, նպատակ ունենալով վերացնել Քարթլիի և Կախեթիայի իշխանությունները: Ինչպես նախորդ տասնամյակում, այնպես էլ այժմ շահը հմտորեն օգտագործում է վրացական վերնախավում առկա հակասություններն ու ներքին երկպառակությունները: Այս անգամ Քարթլիի իշխան Լուարսաբի դեմ է ապստամբում Թիֆլիսի մոուրավ Գեորգին Սահակաձեն: Ինչպես վկայում են աղբյուրները՝ այս ապստամբության պատճառն անձնականթշնամանքն էր, քանի որ Լուարսաբը խոստացել էր կնության առնել Գեորգիի քրոջը, սակայն հետագայում հրաժարվել էր իր խոսքից[3]: Բացի վերոնշյալ ներքին խժդժություններից, հարկ է նշել նաև, որ Լուարսաբը հրաժարվում է ճանաչել Իրանի գերիշխանությունը և իր քրոջը կնության հանձնել շահ Աբբասին[4]:Գեորգի Սահակաձեն, ցանկանալով ստանալ Իրանի օգնությունը, դիմում է շահ Աբբասին: Վերջինս հոժարակամ ընդունում է

Գեորգի Սահակաձեին և խոստանաում է հաստատել նրան Վրաստանի գահին, եթե վրացի իշխանը պարսկական զորքերի միջոցով գրավի Վրաստանը և ընդունի Իրանի գերիշխանությունը: Քարթլիի և Կախեթիայի թագավորներ Լուարսաբն ու Թեյմուրազը, ստանալով թշնամու հարձակման լուրը, որոշում են միավորվել: Երբ շահի լրտեսները տեղեկացնում են վրացական ուժերի միավորման լուրերը, շահ Աբբասը, նախքան ռազմական գործողություններին անցնելը որոշում է դավադրաբար միմյանց դեմ հանել վրացական թագավորներին: Այդ նպատակով նա նամակ է ուղարկում Լուարսաբին, որտեղ հայտնում է, թե Թեյմուրազը ցանկանում է տիրել Քարթլիի թագավորությանը և պատրաստվում է սպանել Լուարսաբին, ուստի առաջարկում է նախահարձակ լինել և առաջարկում է իր օգնությունը այդ գործում:

---

[1] Հ. Խ. Նաջարյան, Թուրք-իրանականհարաբերությունները 16-դդարումու 17-դդարիառաջինկեսինևՀայաստանը, Երևան, 1961, էջ 225:
[2] Н. Бердзенишвили, История Грузии, Тбилиси, 1960, стр. 285.
[3] Вахушти Багратиони, История царства грузинского, Тбилиси, 1976, стр. 49-50.ԱռաքելԴավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988, էջ 92-98:
[4] R.Savory, History of Shah ‘Abbas the Great (translation of Monshi), vol. 1, Boulder, 1978, p. 147.

Նույնաբովանդակ մի նամակ էլ ուղարկում է Թեյմուրազին, որտեղ նշում է Լուարսաբի դավաճանության մասին: Սակայն, շուտով այս դավադրությունը պարզ է դառնում, երբ վրացական թագավորները միմյանց հայտնում են այդ նամակների մասին[1]:

1614թ-ին պարսկական զորքերը ներխուժում են Կախեթիա և մեծ ավերածություններ գործում: Լուարսաբն ու Թեյմուրազը փախուստի են դիմում՝ թողնելով ժողովրդին բախտի քմահաճույքին: Շահ Աբբասը իր մեծաթիվ զորքերով գերեվարում է հազարավոր մարդկանց, որոնք վերաբնակեցվում են Իրանի տարբեր մասերում: Գերիների մեջ մեծ մաս էին կազմում նաև հայերը, որոնք վրացիների և հրեաների հետ քշվեցին Ֆահրաբադ և Ղազվին քաղաքները: Վերաբնակեցման ծանր պայմանների պատճառով գերեվարված բնակչության մեծ մասը մահանում է, տարածված էին վարակիչ հիվանդություններ, տիրում էր համատարած սով: Այս պայմաններում պարսկական իշխանությունները ստիպում էին քրիստոնյաներին հավատափոխ լինել: Կախեթիայի բնակչության մի մասը, չդիմանալով չքավորությանն ու սովին, ձևականորեն մահմեդականություն են ընդունում:

Երբ պարսկական զորքերը ամբողջությամբ գրավում են Վրաստանը, շահ Աբբասը վրացական ամրոցներում պարսից զորքեր է ամրակայում, որոնք պետք է պահպանեին Իրանի իշխանությունը: Երբ շահը վերադառնում է Էսֆահան, իր հետգերեվարում է նաև Քարթլիի թագավոր Լուարսաբին: Վերջինիս բանտարկում է Գուլաբկալա կոչվող ամրոցում և տարիներ անց հրամայում է խեղդամահ անել[2]:

Այսպիսով, շահ Աբբասի կողմից իրականացված բանակի վերազինման և վերակազմակերպման արդյունքում Սեֆյան Իրանին հաջողվում է ոչ միայն հակահարված հասցնել իր հիմնական ախոյանին՝ Օսմանյան Թուրքիային, այլև վերադարձնել Հարավային Կովկասի այն բոլոր տարածքները, որոնք շահ Աբբասը ստիպված էր եղել զիջել իր կառավարման առաջին տարիներին: Գրավելով Վրաստանը՝ շահ Աբբասը հաստատում է իրանական գերիշխանությունն այս տարածաշրջանում և Հարավայի Կովկասը գրեթե ամբողջությամբ հայտնվում է Սեֆյան Իրանի կազմում:

[1]ԱռաքելՀավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988, էջ 100:
[2]Вахушти Багратиони, История царства грузинского, Тбилиси, 1976, стр. 54.

Вторжение Шаха Аббаса в Восточную Грузию и утверждение иранской власти в начале XIIVв.

А.Акопян

Резюме

В 1590 году шах Аббас II был вынужден уступить Турции основные южнокавказские территории, которые были под властью Ирана. В начале 17-го века Шах переформировал иранскую армию, что привело к развязыванию войны с Турцией в 1603 году. В течение нескольких лет иранская армия отвоевывала у Турции все южнокавказские территории и установила в регионе иранское влияние.

The Invasion of Shah Abbas to East Georgia and Confirmation of the Iranian Power at the Beginning of the XIIVcentury

A.Hakobyan

Summary

In 1590 Shah Abbas forced to cede Iranian domain estate of South Caucasus to Turkey. At the beginning of 17-th century shah reorganized Iranian army, in consequence of which in 1603 he began a war with Turkey and during several years reconquered territories of South Caucasus and established Iranian domination at the region.